ԵԴ2/10699/02/26
(ՎԴ/16219/05/26)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 հոկտեմբերի 2026 թվական ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին փոխարինող, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս և ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս նիստում ուսումնասիրելով թիվ ԵԴ2/10699/02/26 (ՎԴ/16219/05/26) գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի սեպտեմբերի 28-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2026 թվականի սեպտեմբերի 2-ին հայցադիմում է ներկայացրել (վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի միջոցով) ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Արցախ հայրենիք» (մարդասիրական նախաձեռնություն) հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ Կազմակերպության գործունեությունը կասեցնելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հոկտեմբերի 1-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ ՀՀ վարչական դատարանը 2026 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. «*(…) օրենսդիրը միավորումների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ գործերը Վարչական դատարանի ընդդատությանը վերապահելիս որոշիչ նշանակություն է տվել ոչ թե տվյալ միավորման կազմակերպաիրավական ձևին, այլ դրա գործունեության կամ նախաձեռնվող գործունեության բնույթին՝ այն պետք է առնչվի հանրային իրավունքի բնագավառին:*

(…):

Տվյալ դեպքում պատասխանող ՀԿ-ի կանոնադրական նպատակների և գործունեության առարկայի ուսումնասիրությունից հետևում է, որ կազմակերպության գործունեությունն ուղղված է քաղաքացիների աջակցմանը հանրային նշանակության գերատեսչությունների որոշումների վերահսկման ընդունման և պետական խնդիրներում, հասարակության տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը, կարիքավոր Արցախցիների և ՀՀ քաղաքացիների աջակցությանը, 2020 թվականի պատերազմի մասնակիցներին և նրանց ընտանիքի անդամներին աջակցմանը, Արցախից տեղահանվածներին աջակցությանը, քաղաքացիներին իրավաբանական բնույթի խորհրդատվության տրամադրմանը և աջակցությանը, տնտեսական և սոցիալական իրավունքների ամրապնդմանը և առաջխաղացմանը, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն իրականացնելուն և իր բնույթով սահմանափակվում է անդամների/որոշակի խմբի/կազմակերպության իրավունքների և

օրինական շահերի ներկայացմամբ, պաշտպանությամբ և սպասարկմամբ: Կազմակերպությանը օրենքով վերապահված չեն հանրային իշխանության իրականացման, հանրային-իրավական կարգավորման կամ այլ հատուկ հանրային գործառույթներ, ինչպես նաև վերջինս իրավասու չէ իր գործունեության շրջանակում այլ անձանց համար հանրային-իրավական բնույթի պարտադիր իրավական հետևանքներ առաջացնող որոշումներ ընդունելու:

Այսպիսով, պատասխանող կազմակերպության գործունեության մեջ բացակայում է այնպիսի հանրային-իրավական հատուկ բաղադրիչ, որը հիմք կտար այն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իմաստով հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորում որակելու համար:

Դատարանը միաժամանակ ընդգծում է, որ տվյալ դեպքում կազմակերպության գործունեության կասեցման պահանջի՝ դատական կարգով քննության ենթակա լինելը և այդ պահանջի՝ Վարչական դատարանին ընդդատյա լինելը տարբեր իրավական հարցեր են: «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով գործունեության կասեցման հարցի լուծումը դատարանին վերապահված լինելու հանգամանքը նշանակում է, որ գործունեության կասեցումը չի կարող իրականացվել վարչական մարմնի կողմից ինքնուրույն, սակայն այն չի կանխորոշում, թե օրենքով նախատեսված դատական պաշտպանության այդ ձևն իրականացնող որ դատարանն է իրավասու քննել համապատասխան պահանջը:

Հետևաբար, միայն այն հանգամանքը, որ կազմակերպության գործունեության կասեցումը օրենքով նախատեսված է դատարանի որոշմամբ, բավարար չէ այդ պահանջը Վարչական դատարանի ընդդատությանը վերագրելու համար: Վարչական դատարանի իրավասությունը տվյալ դեպքում պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հատուկ նախապայմանի՝ կազմակերպության հանրային իրավունքի բնագավառում գործելու կամ գործելու նպատակ ունենալու առկայությամբ:

Քանի որ տվյալ դեպքում այդ նախապայմանը բացակայում է, պատասխանող ՀԿ-ի գործունեության կասեցման վերաբերյալ ներկայացված պահանջը դուրս է

Վարչական դատարանի առարկայական ընդդատության շրջանակից և ենթակա է քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:

(…):

Ամբողջ վերոնշյալի հաշվառմամբ՝ դատարանը գտնում է, որ սույն հայցն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին և սույն գործով հայցադիմումը ենթակա է վերահասցեագրման ըստ ընդդատության՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան: (…)»[1]:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 26-րդ հոդվածի 2-րդ ու 5-րդ մասերին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածին, 77-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.26-րդ հոդվածին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասին, 3-րդ հոդվածի 4-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, 24-րդ հոդվածի 4-րդ ու 7-րդ մասերին, 27-րդ հոդվածին, 31-րդ հոդվածի 1-ին մասին, 2-րդ մասի 1-ին կետին, 3-րդ մասի 1-ին կետին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09, 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ քննության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում ու այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) Այն հանգամանքը, որ կազմակերպությանը օրենքով վերապահված չեն հանրային իշխանության իրականացման, հանրային-իրավական կարգավորման կամ այլ հատուկ հանրային գործառույթները, ինչպես նաև վերջինս իրավասու չէ իր գործունեության շրջանակում այլ անձանց համար հանրային-իրավական բնույթի պարտադիր*

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 1-8:

իրավական հետևանքներ առաջացնող որոշումներ ընդունելու, քննադատության չի դիմանում: Դատարանը ևս գտնում է, որ հասարակական կազմակերպությունները հանդիսանում են ոչ առևտրային բնույթի իրավաբանական անձինք, որոնք իրենց կանոնադրական նպատակներով պայմանավորված իրականացնում են որոշակի գործունեություն: Ընդ որում, այդ գործունեությունը կարող է լինել հասարակական կյանքի տարբեր շերտերում և բնագավառներում:

Սակայն, վեճի առարկա հանդիսացող իրավահարաբերությունների հանրային բնույթի լինելու կամ չլինելու հանգամանքը չի կարող պայմանավորվել պատասխանող կազմակերպության հանրային իշխանության իրականացման, հանրային-իրավական կարգավորման կամ այլ հատուկ հանրային գործառույթներ ունենալու կամ չունենալու հետ:

Այս համատեքստում Դատարանը փաստում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պահանջը վերաբերում է ոչ թե ՀԿ-ի և որևէ մասնավոր սուբյեկտի միջև ծագած քաղաքացիաիրավական հարաբերությանը, այլ հասարակական կազմակերպությանը՝ օրենքով սահմանված հանրային բնույթի պարտականության կատարմանը և այդ պարտականության խախտման հետևանքով օրենքով նախատեսված՝ կազմակերպության գործունեությունը կասեցնելու իրավական հետևանքին:

Դատարանը փաստում է, որ փաստական գործի առարկայական ընդդատությունը որոշելիս անհրաժեշտ է ելնել ոչ միայն պատասխանող կազմակերպության իրավական կարգավիճակից, այլ ներկայացված պահանջի բնույթից, դրա հիմքում ընկած փաստակազմից, որի շրջանակներում հայցը ներկայացվել է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով օրենսդիրը հատուկ նախատեսել է հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումներին, այդ թվում՝ արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ գործերի ընդդատությունը վարչական դատարանին:

Հետևաբար, երբ լիազոր պետական մարմինը օրենքով իրեն վերապահված հանրային իշխանական լիազորության իրականացման շրջանակներում դիմում է դատարան՝ հասարակական կազմակերպության գործունեությունը կասեցնելու

պահանջով, վեճի հիմքում ընկած իրավահարաբերությունը չի կարող նույնացվել կազմակերպության և մասնավոր անձանց միջև առաջացող զուտ քաղաքացիաիրավական հարաբերությունների հետ:

Այսինքն՝ տվյալ դեպքում ՀՀ պետական եկամուտների պահանջի վերջնական իրավական նպատակը ՀԿ-ի գործունեության կասեցումն է:

(...):

(...) սույն գործով ՀՀ ՊԵ կոմիտեն, հանդիսանալով վարչական մարմին, օրենքով իրեն վերապահված գործադիր-կարգադրիչ լիազորությունների շրջանակում կատարել է վերահսկողություն, ինչի արդյունքում էլ հարուցել է վարչական վարույթ, որոնք ավարտվել են մի դեպքում նախազգուշացման կիրառմամբ, մյուս դեպքերում համապատասխանաբար 50.000 դրամի և 200.000 դրամի չափով տուգանքներով:

Վերոնշյալ վարչական վարույթների հետևանքների չվերացումը Օրենքի տրամաբանությամբ հանդիսացել է կոպիտ խախտում, ինչն էլ ՀՀ ՊԵ կոմիտեի համար հանդիսացել է նախադրյալ Կազմակերպության գործունեությունը կասեցնելու պահանջով Դատարան դիմելու համար:

Դատարանի գնահատմամբ սույն վեճի ենթակայության հարցը որոշելիս հայցի վերոնշյալ փաստարկումներն ունեն անկյունաքարային նշանակություն:

Այսպես, ստացվում է, որ վարչական մարմնի կողմից հարուցվել է թվով երեք վարչական վարույթ պատասխանող կազմակերպության նկատմամբ և կայացվել են վարչական ակտեր, որի օրենքով նախատեսված տրամաբանական շարունակությունն է հանդիսանում կազմակերպության գործունության կասեցումը:

Դատարանի գնահատմամբ, տվյալ դեպքում գործ ունենք ոչ թե հասարակական կազմակերպության գործունեության հետ՝ որպես քաղաքացիաիրավական շրջանառության սուբյեկտ, այլ կազմակերպության՝ որոշակի հանրային բնույթի պարտականությունների չկատարման հետ, ինչն էլ ուղղակի հանդիսանում է վարչական իրավախախտում:

Ստացվում է մի իրավիճակ, երբ ՀՀ ՎԻՎ օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ վարչական մարմինը հարուցում է վարչական վարույթ, կայացնում է վարչական ակտեր (նախազգուշացում, տուգանքներ), սակայն այդ նույն իրավախախտումների հետևանքները չվերացնելու համար օրենքով նախատեսված մեկ

այլ վարչական պատասխանատվության միջոց հանդիսացող գործունեության կասեցումը պետք է քննվի և կիրառվի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից, ինչը Դատարանի գնահատմամբ պարզապես անտրամաբանական է:

(…):

Ստացվում է, որ իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ ՀՀ ՊԵ կոմիտեն է: Իրավահարաբերության բովանդակությունը կայանում է ՀՀ ՊԵԿ-ի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը՝ այն է՝ վարչական իրավախախտում կատարած սուբյեկտի գործունեության կասեցումը, իսկ վերոնշյալ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ՝ այն է կազմակերպության կողմից՝ պետական-վարչական մարմնին հաշվետության թերի ներկայացումը:

(…):

(…) տվյալ վեճի բնույթը որոշելիս Դատարանը պարտավոր է գնահատել ոչ միայն ՀԿ-ի կազմակերպաիրավական բնույթը, այլ՝ վիճելի իրավահարաբերության առաջացման հիմքը, Պետական եկամուտների կոմիտեի լիազորության աղբյուրը, պահանջի առարկան և օրենքով նախատեսված իրավական հետևանքը: Այս հանգամանքների ամբողջության պայմաններում տվյալ վեճը գտնվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կարգավորման շրջանակում:

Արդյունքում՝ Դատարանը եզրահանգում է, որ կողմերի միջև ծագել են ոչ թե քաղաքացիաիրավական (մասնավոր), այլ՝ հանրային իրավահարաբերություններ, հետևաբար՝ ներկայացված հայցադիմումը ենթակա է քննության ՀՀ վարչական դատարանի կողմից: (…)»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական*

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 76-88:

դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ2/10699/02/26 (ՎԴ/16219/05/26) գործն ըստ հայցի ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ընդդեմ «Արցախ հայրենիք» (մարդասիրական նախաձեռնություն) հասարակական կազմակերպության՝ «Արցախ հայրենիք» (մարդասիրական նախաձեռնություն) հասարակական կազմակերպության գործունեությունը կասեցնելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մասնակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(…)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝*

1) (…)

2) վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, ներառյալ՝ արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը (...)»:

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(...) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (...) Հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ*

հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»[3]:

9.1. ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ *Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարության աղընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հոիփսիմե Իշիկյանի* քաղաքացիական գործով կայացված թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշմամբ արձանագրել է. «*[Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.*

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՝ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՝ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՝ ոչ:

Միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, (…)»[4]:

---

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

[4] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարության աղընթեր քաղաքացիական ավիացիայի*

9.2. Մեկ այլ որոշմամբ վերահաստատելով վերը նշված դիրքորոշումները՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով իրավահարաբերության բնույթը պարզելու նպատակով կիրառվելիք մեխանիզմներին, *Լուսինե Սահակյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի* քաղաքացիական գործով 2022 թվականի մայիսի 13-ի որոշմամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «*Իրավահարաբերության բնույթը պարզելու համար հարկավոր է այն դիտարկել շահերի տեսության, ենթակարգության տեսության և հատուկ իրավունքի տեսության համատեքստում:*

Ըստ շահերի տեսության՝ հանրային իրավունքը մասնավորից տարբերվում է այն շահի տեսակով, որոնք պաշպանվում են առանձին իրավանորմով: Այն իրավանորմերը, որոնք ծառայում են հանրային կամ ընդհանուր շահին, պատկանում են հանրային իրավունքին: Մինչդեռ, մասնավոր իրավանորմերը ծառայում են մասնավոր կամ անհատական շահերին:

Ենթակարգության տեսությունը ելնում է մասնակիցների հարաբերությունների բնույթից և կիրառվում է միայն այն դեպքում, երբ հարաբերության մասնակիցներն են մի կողմից պետությունը, իսկ մյուս կողմից քաղաքացին: Ըստ այս տեսության՝ այն իրավանորմերը, որոնք կարգավորում են հանրային իշխանությունը կրողների գործողությունները, համարվում են հանրային-իրավական, երբ դրանք վերաբերում են վերադասության-ենթակայության հարաբերությանը: Եթե մասնակիցների միջև առկա է վերադասության-ենթակայության հարաբերություն, ապա իրավահարաբերությունը հանրային է, իսկ եթե իրավունքի երկու սուբյեկտները միմյանց առջև հանդես են գալիս իրավահավասար կերպով, ապա առկա են մասնավոր-իրավական հարաբերություններ:

Հատուկ իրավունքի տեսությունն իր հերթին նույնպես կոչված է պարզելու վեճի հանրային-իրավական բնույթը: Այն ելնում է վեճը լուծող իրավանորմերի իրավական բնույթից: Ըստ այս տեսության՝ եթե վեճը լուծվում է հանրային-իրավական նորմերի միջոցով, ապա առկա է հանրային-իրավական վեճ, իսկ եթե վեճը լուծում են մասնավոր-իրավական նորմերը, ապա կունենանք մասնավոր-իրավական վեճ:

գլխավոր վարչության, երրորդ անձ Հոիփսիմե Իշխկյանի քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշումը:

Վերոնշյալ տեսությունների հիմքում դրված չափանիշներից ելնելով՝ անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին.

- որ նորմերն են լուծում վեճը,

- արդյո՞ք դրանք հանրային-իրավական նորմեր են (ինչ շահերի պաշտպանությանն են ուղղված այդ նորմերը),

- արդյո՞ք իրավահարաբերության մասնակիցների միջև առկա է վերադասության-ենթակայության հարաբերություն»[5]:

10. Սույն որոշման 8-9.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Միաժամանակ, հանրային իրավահարաբերությունը հանրային իրավունքի նորմերով կարգավորվող իրավական կապ է, որի շրջանակներում իրավահարաբերության մասնակիցների իրավունքները, պարտականությունները, իրավասությունները կամ իրավական կարգավիճակը պայմանավորված են հանրային իշխանության կազմակերպմամբ կամ իրականացմամբ, հանրային գործառույթների կատարմամբ կամ հանրային-իրավական կարգավիճակի իրացմամբ: Իրավահարաբերության հանրային-իրավական բնույթը որոշելիս անհրաժեշտ է ելնել ոչ միայն դրա սուբյեկտային կազմից կամ հետապնդվող նպատակից, այլև իրավահարաբերության առաջացման նորմատիվ հիմքից, դրա օբյեկտից, բովանդակությունից, մասնակիցների կոնկրետ իրավական կարգավիճակից և նրանց

---

[5] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Լուսինե Սահակյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի* քաղաքացիական գործով 2022 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԴ/38635/02/19 որոշումը:

կողմից իրականացվող իրավական գործառույթի բնույթից: Ընդ որում, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի մասնակցությունը, հանրային շահի առկայությունը կամ հանրային նշանակության գործունեության իրականացումն ինքնին բավարար չեն իրավահարաբերությունը հանրային-իրավական որակելու համար, եթե համապատասխան իրավական կապի բովանդակությունը չի բխում հանրային իրավունքի նորմերով սահմանված իրավասություններից, իրավունքներից կամ պարտականություններից: Բացի այդ, հանրային իրավահարաբերության գոյությունը չի ենթադրում պարտադիր իշխանական ենթակայություն, քանի որ հանրային իրավունքի շրջանակներում հնարավոր են նաև իրավական համակարգման, համագործակցության և հատուկ հանրային-իրավական կարգավիճակի իրացման հարաբերություններ: Հետևաբար, իրավահարաբերության հանրային կամ մասնավոր բնույթը պետք է որոշվի դրա բոլոր իրավաբանորեն նշանակալի տարրերի համակարգային գնահատմամբ՝ հաշվի առնելով համապատասխան իրավական կարգավորման նպատակը, բովանդակությունն ու իրավական հետևանքները և բացահայտելով իրավահարաբերության տարրերը՝ օբյեկտը, սուբյեկտը, բովանդակությունը:

11. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Կազմակերպությունն իրականացնում է իր կանոնադրական նպատակներից բխող գործունեություն: Կազմակերպության գործունեության նպատակները սահմանվում են նրա կանոնադրությամբ*»:

Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «*1. Կազմակերպությունը պարտավոր է՝*

(…)

4) սույն օրենքի պահանջների կատարումը ապահովելու համար Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Լիազոր մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր»:

Օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «*Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը, Կազմակերպությունների կողմից հրապարակվող էլեկտրոնային հաշվետվությունների համար նախատեսված համակարգի (այսուհետև՝ Համակարգ) անձնական էջում և իր*

պաշտոնական ինտերնետային կայքում (այդպիսին ունենալու դեպքում) հրապարակել գործունեության տարեկան հաշվետվությունը»:

Օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողությունն իրականացնում է Լիազոր մարմինը:*

2. Կազմակերպության կողմից սույն օրենքի պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերվելու դեպքում, որոնք կարող են վերացվել Կազմակերպության ձեռնարկած միջոցառումներով, Լիազոր մարմինը Կազմակերպությանն առաջարկում է խախտումները վերացնելու կարգն ու ժամկետները»:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Կազմակերպության գործունեությունը կարող է որոշակի ժամկետով կասեցվել դատարանի որոշմամբ՝ Լիազոր մարմնի դիմումի հիման վրա: Լիազոր մարմնի դիմումը պետք է լինի պատճառաբանված՝ նշելով այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որի խախտումը հիմք է Կազմակերպության գործունեությունը կասեցնելու համար, և ներկայացնելով խախտման փաստը հաստատող ապացույցները*»:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «*2. Դատարանն իրավունք ունի կասեցնելու Կազմակերպության գործունեությունը, եթե՝*

1) Կազմակերպությունը թույլ է տվել օրենքի կոպիտ խախտում»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «*3. Սույն հոդվածի 2-րդ մասի իմաստով՝ կոպիտ խախտում է համարվում՝*

1) սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում խախտումները չվերացնելը.

2) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվության առավել խիստ միջոցը կիրառելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, խախտումը չվերացնելը»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.26-րդ հոդվածի համաձայն՝ «*Օրենքով նախատեսված պարտադիր հրապարակման ենթակա հաշվետվությունը թերի հրապարակելը, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չհրապարակելը առաջացնում են նախազգուշացում հասարակական կազմակերպության իրավասու պաշտոնատար անձանց նկատմամբ:*

Օրենքով սահմանված կարգով նախազգուշացվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, հասարակական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պահանջը չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ հասարակական կազմակերպության իրավասու պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգապատիկի չափով։

Տուգանքի նշանակման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, հասարակական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախազգուշացման պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ հասարակական կազմակերպության իրավասու պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով»:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2026 թվականի սեպտեմբերի 2-ին հայցադիմում է ներկայացրել (վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի միջոցով) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Կազմակերպության՝ Կազմակերպության գործունեությունը կասեցնելու պահանջի մասին[6],

- հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ Կազմակերպության գործունեության մեջ բացակայում է այնպիսի հանրային-իրավական հատուկ բաղադրիչ, որը հիմք կտար այն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10 րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իմաստով հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորում որակելու համար[7],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ եզրահանգել է, որ տվյալ վեճի

[6] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

բնույթը որոշելիս դատարանը պարտավոր է գնահատել ոչ միայն Կազմակերպության կազմակերպաիրավական բնույթը, այլ՝ վիճելի իրավահարաբերության առաջացման հիմքը, Պետական եկամուտների կոմիտեի լիազորության աղբյուրը, պահանջի առարկան և օրենքով նախատեսված իրավական հետևանքը: Այդ հանգմանքների ամբողջության պայմաններում տվյալ վեճը գտնվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կարգավորման շրջանակում: Արդյունքում՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը եզրահանգել է, որ կողմերի միջև ծագել են ոչ թե քաղաքացիաիրավական (մասնավոր), այլ՝ հանրային իրավահարաբերություններ, հետևաբար՝ ներկայացված հայցադիմումը ենթակա է քննության ՀՀ վարչական դատարանի կողմից[8]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է փաստել, որ սույն գործով հայցվորը ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն է, որը հայցադիմումը դատարան է ներկայացրել՝ գործելով որպես Օրենքով սահմանված լիազոր մարմին: Այլ կերպ, սույն գործով հայցադիմումի ներկայացումը ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի կողմից Օրենքով սահմանված լիազորության իրականացում է: Միաժամանակ, քննարկվող գործով հայցի առարկան Կազմակերպության գործունեության կասեցումն է, որը դատարան է ներկայացվել՝ ըստ էության այն հիմնավորմամբ, որ Կազմակերպությունը «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված հաշվետվությունը թերի է հրապարակել և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.26-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության առավել խիստ միջոցը կիրառելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, խախտումը չի վերացրել:

Հարկ է փաստել, որ Օրենքի 27-րդ և 31-րդ հոդվածների բովանդակությունից բխում է, որ հասարակական կազմակերպության գործունեության կասեցումը հանդիսանում է պետական վերահսկողության շրջանակներում կիրառվող բացառիկ իրավական միջոց, որի կիրառման իրավասությունը վերապահված է դատարանին՝

[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

լիազոր մարմնի պատճառաբանված դիմումի հիման վրա: Օրենսդիրը կազմակերպության գործունեության կասեցման իրավական հնարավորությունը պայմանավորել է ոչ թե օրենքի ցանկացած խախտման առկայությամբ, այլ Օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված հատուկ իրավական նախադրյալների հաստատմամբ: Մասնավորապես, Օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով կոպիտ խախտում է համարվում ինչպես լիազոր մարմնի կողմից Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում խախտումները չվերացնելը, այնպես էլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված պատասխանատվության առավել խիստ միջոցը կիրառելուց հետո երեսնօրյա ժամկետում խախտումը չվերացնելը: Հասարակական կազմակերպության գործունեության տարեկան հաշվետվությունը չհրապարակելու կամ թերի հրապարակելու դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.26-րդ հոդվածը նախատեսում է վարչական պատասխանատվության աստիճանական համակարգ, որի շրջանակներում վարչական տույժերը կիրառվում են կազմակերպության իրավասու պաշտոնատար անձանց նկատմամբ: Այդ տույժերի կիրառումը, սակայն, ինքնին չի առաջացնում կազմակերպության գործունեության կասեցում, քանի որ վերջինս ինքնուրույն իրավական միջոց է, որի կիրառումը պահանջում է Օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հատուկ նախադրյալների առկայություն և համապատասխան դատական ակտ, որպիսի ընթացակարգի կիրառումը մեկնարկում է լիազոր մարմնի հայցով, որն էլ գործելով հանրային հարաբերությունների բնագավառում՝ իրացնում է Օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթը:

Հարկ է ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով Վարչական դատարանին ընդդատյա լինելու համար բավական է բացառապես այն հանգամանքը, որ գործը ծագի հանրային իրավահարաբերություններից: Իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված առանձնահատկությունները ոչ թե սահմանափակում են ՀՀ վարչական դատարանին ենթակա գործերը, այլ ընդհակառակը ի թիվս հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերի լրացուցիչ սահմանում են նաև այն գործերը, որոնք վարչական մարմինների միջև

ծագած այնպիսի վեճերով են, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով, ինչպես նաև հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, ներառյալ՝ արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով են: Այլ կերպ, եթե հայցի առարկան վերաբերում է հանրային իրավահարաբերություններից ծագող վեճին, ապա գործն արդեն իսկ ենթակա է ՀՀ Վարչական դատարանի քննությանը՝ անկախ այլ հանգամանքների առկայությունից կամ բացակայությունից:

Վերոգրյալը հիմք է տալիս փաստելու, որ սույն գործով իրավական վեճն ուղղակիորեն բխում է հանրային իրավահարաբերություններից, որպիսի պայմաններում վերապահված է Վարչական դատարանի ենթակայությանը:

14. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ2/10699/02/26 (ՎԴ/16219/05/26) գործն ըստ հայցի ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ընդդեմ «Արցախ հայրենիք» (մարդասիրական նախաձեռնություն) հասարակական կազմակերպության՝ «Արցախ հայրենիք» (մարդասիրական նախաձեռնություն) հասարակական կազմակերպության գործունեությունը կասեցնելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

Ուստի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հայցի հիման վրա հարուցված թիվ ԵԴ2/10699/02/26 (ՎԴ/16219/05/26) գործը ենթակա է ՀՀ Վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ԵԴ2/10699/02/26 (ՎԴ/16219/05/26) գործն ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հայցի ընդդեմ «Արցախ հայրենիք» (մարդասիրական նախաձեռնություն) հասարակական կազմակերպության՝ «Արցախ հայրենիք» (մարդասիրական

նախաձեռնություն) հասարակական կազմակերպության գործունեությունը կասեցնելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ Վարչական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ